

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՈՌՄԱՅԵՑՑԻՈՑ

(Շաբ. տես. 1916 թվ. էջ 266)



Հաւանորէն լիւրիկանն
ՎԵՆԵՏԱՅԻՔ ծագումէ են վեհեհտացիք,
 որոնք վերին իտալիոյ
 արեւելեան մասը զբաւեցին, և իրենց ա-
 նունով կոչեցին վենետիաւ կը համարուի
 որ ժամանակ մը վենետացիք տարածուած
 ըլլան իտալական Ալբիականի ամբողջ զառ
 ի վայրը, և արտաքսուելով ուրիշ ժողո-
 վուրդներէ, իրենցմէ ճիւղ մը խառնուած
 ըլլայ Յայդցներու (Ալպուլիացիներու) հետ,
 որ հնդկ-եւրոպական ժողովուրդ մ'էր և
 կը բնակէր Յապիզիա թերակղզին. իսկ
 պատմական շրջանին՝ կը գտնենք հաւա-
 ւային իտալիոյ մէջ. վենետացւոց ցեղակից
 էին իտալիացիք:

Պատմական շրջանին՝
ԵՏՐՈՒՐԱՅԻՔ չորս ժողովուրդ կը գրա-
 ւէր իտալական հողը.
 Եւրուրացիք, իտալացիք, Գաղղիացիք և
 Յոյներն:

Այսպէս հարաւային կողմը կը
 բնակէին Եւրոպացիք կամ Տոսկիացիք
 (Տիրենացիք), արեւելքի խորհրդաւոր ժո-
 ղովուրդ մը՝, որուն ո՛չ ցեղը և ո՛չ ալ
 իրզուն ծանօթ են: Իրենցմէ մնացած գրեթէ
 երկու հազար արձանագրութիւններէն՝ հա-
 զիւ թէ ըսանի չափ կարգացուած են. չի
 գիտցուիր թէ ուսկից եկեր են: Եւրուրա-
 ցիք ո՛չ մէկ նմանութիւն չունէին Յոյնե-
 րուն և Լատիններուն հետ: Նկարագրուած

են իբր գէր, կարճ, Թանձրամիս, կորովի
 մարդիկ, հաւթաձև դէմքով, «ծուռ քի-
 թով, լայն ու դէպի ետեւ հակած ճակա-
 տով, մութ գոյնով, քիչ մը փոսացած
 զանկով և ալեծածան մազով»:

Անցնելով Թետեան Ալպաններէն (իբր
 1200 Գ. ա.), Եւրուրացիք ի սկզբան
 բնակեցան Բոյի հովիտը, բայց Գաղղիա-
 ցիներէն վնասուելով՝ հաստատուեցան Տի-
 բերիսի, Առնոյի և Ալպենինեանց մէջտեղը,
 արդի Դոսկանայի արգաւանդ գաւառը, որ
 իրենց անունով Եւրուրիա կոչուեցաւ:
 Ժամանակի ընթացքին մէջ՝ տարածուե-
 ցան Տիրերիս գետէն անդին, ծովափնե-
 րուն երկայնութեամբ, և գրաւեցին կամ
 պանիան մինչև Նէպոլսուոյ ծոցը, հիմնելով
 շատ քաղաքներ: Եւրուրիան և կամպա-
 նիան կը կազմէին 12 ինքնիշխան քա-
 ղաքներու ղաշնակցութիւն մը՝ իրարու
 հետ միացած հասարակաց պաշտամունքով:
 Եւրուրիոյ մայրաքաղաքն էր Վուլսինիա,
 կամպանիոյ՝ կապուա, անուանի իր հարըս-
 տութեամբը:

Իտալիոյ մէջ բնակող
ԵՏՐՈՒՐԱՅԻՈՑ հին ժողովուրդներէն
ԿՐՈՆՔԸ ամենէն հզօրն և քա-
 ղաքակիրթը հանդի-
 սացան Եւրուրացիները: Կրօնքը տիրող
 տարրն էր իրենց մէջ. Կ'ապրէին սաւա-
 սափի ու անծանօթի մէջ՝ թէ՛ այս աշ-
 խարհիս վրայ և թէ՛ մահէն յետոյ: Ե-
 րևելքի դերն էին՝ Տիևա (Արամազդ), Կու-
 ղիտիս (Հեբա), Նիգաւաւոր աստուած,
 Միկեթրուս (Աթենաս), գտնող սրինգի և
 պատերազմական Թմուկի, Վերտումնոս,
 տարւոյ եղանակներն ու անոնց զանազան

1. Նոնո ի վեր՝ շատ վեհեր եղած են այն նշանուոր
 ազգին ծագման վրայ: Դրոնեախոս Ալիկանացին կը
 նկատէ զայն երկրածին, Բայց Եւրուրացիներն իրենց
 գերեզք արդէն իբր տարաբան կը համարէին իտալիոյ
 մէջ: Ըստ Հելլանիկոս յայն պատմաբանին՝ Եւրուրա-
 ցիք պիղապաղ են: Հեթոցառոսի և ուրիշ շատ մը հե-
 ղինակներու վկայութեան համեմատ՝ Լիւդիայէն (Փոքր
 Ասիա) գաղթած են ծովու եամբով՝ իրենց պետին Տիւ-
 ոնեոսի առաջնորդութեամբ: Այս կարծիքն աւելի հաւա-
 նական կը թուի՝ նկատելով որ Արեւելքի ազգեցեւորներն

անոնց քաղաքակրթութեան վրայ ակնհայտ է: Արդի քննա-
 դասներն ուզած են՝ Եւրուրացիները մեղի ծանօթ բոլոր
 ցեղերուն հետ կապել: Զուր տեղ ուսումնասիրեցին չի-
 րիմներու մէջ գտնուած զանկեր՝ առանց կարեւորաւ խն-
 դրին վրայ նոր լոյս մը սփռել: Հաւանական է սակայն՝
 որ Եւրուրիայի մէջ երկու ցեղի իրարու խառնուած են:
 Կ'երկի թէ Թետեան Ալպաններէն անցնելով, նախ հոն
 եկած են ժվ. ղառուն մէջ՝ Քրիստոսէ առաջ՝ ցանի մը
 ցեղեր, և վերջէն տիրենական կամ լիւդեան գաղթա-
 կաններ հասած են՝ ծովուն վրայէն:

բերքերը ցուցնող, Մայր Մատռտա (կերել քաղաքին մէջ), մայր առաւօտեան՝ և ծննդեան աստուած, Սումմանս՝ տէր գիշերական երկնքին՝ ձեռքը փայլալինը բռնած, Վոյտումս՝ պաշտուած վոլսինիայի մէջ և Ետրուրացւոց տասներկու դաշնակից քաղաքներուն մեծեանին աստուած, Սիլուանոս՝ անտառական աստուած, որ մասնաւոր պաշտամունքի առարկայ էր Կերէի եղևնափայտի անտառներու մէջ:



Ետրուրակամ գորգոմ. — Ըստ Սիարուած ածօթի մը. — Ետրուրայից կը պաշտէին լաւ աստուածները՝ զոր կը ներկայացնէին ահաւոր երեւոյթներով:

Ետրուրացւոց աստուածները կը բաժնուէին երկու դասակարգի. նախ 12 վերագոյն աստուածութիւնները (վեց դիք ու վեց դիցուհի), որոնց զօրութիւնը բնուած էր մեծամեծ շարժումներուն մէջ կը յայտնուէր, և 12 խոնարհագոյն աստուածութիւնները, որոնց իշխանութիւնը կը տարածուէր աշխարհի կազմութեան զանազան մասերուն վրայ: Չստ խումբ մը կը ձևացնէին Պենտատերն՝ որ Թերափներ էին, այսինքն տեսական աստուածներ ծնուցող ու սնուցանող, Լարերը՝ պաշտպանիչներ և սահմանազուլիներու շահապետներ:

Ետրուրացւոց կրօնքն երկուորական սկզբունքին վրայ հաստատուած էր, այսինքն՝ Բարի ու Չար ոգիներու վրայ:

Ամենէն աւելի պատուի մէջ էին շար աստուածները, մասնաւորապէս մահուան աստուածները, ներկայացուած ահաբեկիչ զինավորումով: Մանտու, Թեաւոր ոգիի մը կերպարանքով, գլուխը Թագ և ձեռքը Զահ մը բռնած, Շարուն երկայնահասակ, փանտատելով ծերունի մը, վայրագ, զինուած ծանր մուրճով. սոսկալին Տոկուայն՝ արծուի կտուցով մը և իշու ականջներով հրէշ մը, որու մագերէն օձեր էին: Կը պաշտէին նաև մեռածներու ոգիները, վասն զի կը կարծէին թէ անոնք կարող են չարիք հասցնել: Անոնց բարկութիւնն ողորդելու համար՝ մարդկային զոհեր կը կատարէին: Ասկէ ծնունդ առին սուսերամարտիկներու կրօնները:

Բուն քրմական դասակարգ ԳՐՄՈՒԹԻՒՆ մը թէև չկար, սակայն ազնուականաց քրմական

ցեղը կը տիրապետէր՝ օտարներն արտաքինելով իրմէ՝ հիմնուած աստուածային իրաւունքի և հաւաքմանութեան վրայ: Փրմութիւնն ընտանիքի մէջ ժառանգական ըլլալով՝ նուիրապետութեան բաժնուած էր: Ետրուրածները կը կոչուէին Կամիլլանք (Camilli). Փրմապետը կ'ընտրուէր զաշնակցական տասներկու քուէով, փութմբու ժողովն իրաւարար էր խաղաղութեան և պատերազմի, և առանց իրեն հաւանութեան՝ բան մը չէր հաստատուեր:

Որովհետև բոլոր իտալիոյ մէջ՝ երևելի գործ մը չէր կատարուեր՝ առանց նախ նշաններով աստուածներու կամքը հասցնելու, ասոր համար Ետրուրացիները մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայէին հաւաքմաներու դասակարգին: Սա կը կարծէր աստուածներու կամքն իմանալ ու ապագան գուշակել՝ Թուլուններու Թուլիէն, անոնց երգելու եղանակէն, զոհերուն փութմբուց զիտելով և երկնքի վրայ ալիւալի երեւոյթներ զննելով, ինչպէս կայծակ, փայլակ, փոթորիկ, և այլն:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ


ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱԶՄ

Եւրոպական հասարակութեան մէջ՝ երեք դասակարգ կար ա. ժառանգական տոհմաւոր կոնսրիներ (Lords-mones), ք. Պաշտպանաւորները (clientes), կազմուած երկրին նախկին բնակիչներէն՝ յաղթողներուն լուծին ենթարկուած. և ք. Ստրուկները (captivi), կազմուած պատերազմական գերիներէ. Միայն տիրապետող և հարուստը՝ ազնուական դասակարգն էր, և կը վայելէր քաղաքական իրաւունքներն ու ժառանգական առանձնա-

խանութեան ւաճառականն էր (Եւրասիոյոր, ներկայացուցիչ ազնուականութեան և ընտրող տարուր պաշտօնեաներու, իւրաքանչիւր քաղաքի վերին առեւակաւը՝ կը մարմնացնէր իր մէջ կրօնական, քաղաքական ու զինուորական բոլոր իշխանութիւնները, ճառներով ազնուականները (յուլիմոններ), — որոնցմէ մէկը նախագահ կ'ընտրուէր, — զաշնակցութեան խորհրդարանին մէջ կը ներկայացնէին դաշնակից տասներկու քաղաքները (այս ձևով կը կառավարուէր արդի Զուիցերիան), Նախագահը՝ միանգամայն էր քրմապետ և գահերէց ազգային տօներուն՝ զոր կը կատարէին Վոլսինիա քաղաքին մէջ, ի պատիւ Վոլստմա գիցուհիին։ Առեւակաւներուն իշխանութեան նշանակներն էին փղուկիէ աթոռ, ծիրանի պատմուճան և տասներկու նուիրակներ՝ ուսերուն վրայ խորձեր ու տապարներ առած։ Պատերազմի ժամանակ զիկտատսը (Lurs) մը կ'ընտրուէր՝ իրը վերին հրամանատար զաշնակցութեան բոլոր ուժերուն։

Ազնուականութեան և պաշտպանաւորներուն մէջ ծագած երկպառակութեանց պատճառաւ, ազատ քաղաքացիներու դասակարգ մը երևան եկաւ, իրը ընդդիմադիր կուսակցութիւն՝ ազնուական դասակարգին։



Հողագործ եւրոպացի. — Պղծմէ խմբակար. — Հողագործը կը կրէ քեզանտը պարեգտ մը և կուրծքի վրայ հանգուցուած սեռակ մ'երկայն վերաբերու՝ երկու բազկներն ազատ թողով։ Քիչ թէ շատ հոմէական տարագ մ'էր։

շնորհութիւնները։ Իր ծոցէն դուրս կու գային առեւակաւներն և ըրմական ընտանիքները։

Ամէն զաշնակից քաղաք՝ իր հողամասով և ստորակարգեալ քաղաքներով՝ առանձին պետութիւն մը կը ձևացնէր՝ լոկ հասարակական շահերու համար՝ միացած ուրիշներու հետ։ Եւրոպական հին պետութեանց նախկին կազմն էր ժառանգական միապետութիւնը. թագաւորին իշխանութիւնը չափաւորուած էր ազնուական դասակարգին ազդեցութեամբը։ Յետոյ թագին ժառանգութիւնը քնջուեցաւ և թագաւորութիւնն ընտրական եղաւ։ Ազնուականութեան զօրութիւնը այնչափ մեծցաւ, որ շատ մը քաղաքներու մէջ արքունի գահը տապալելով՝ փոխուեցաւ սահմանադրական ազնուապետութեան։ Փերագոյն իշ-

Եւրոպացիները
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԳԻՏՅԵՐ
Թուարանական խոր
ծանօթութիւններու
նէին, որուն միջոցաւ
մեքենականութեան և ջրարաշխութեան
արուեստին մեծ մղում տուին, ինչ որ
կ'ապացուցուի իրենց ճարտարապետական
արուեստին և գիտելու ընթացքը կանոնաւորող
աշխատութիւններէն։ Կը գնէին
աստղերու շարժումներն և ունէին 365
օրէ բաղկացած տարի մը՝ բաժնուած 12
ամիսներու։ Բայց այս գիտութիւնները
սեպհական էր միայն ազնուազարմ բուրմերուն։
Բժշկութիւնն և բնագիտութիւնը
մեծ յարգ ունէին Եւրոպացւոց բոլր։

Եւրոպական գրականութենէն բան մը մնացած չէ, ամէն ինչ կորսուեցաւ Հոռմի դէմ մղած ընկերային ու քաղաքական պատերազմներու ժամանակ: Մեր ձեռքը հասած են միայն արձանագրութիւններ և տապանազիրներ, որոնք մինչև ցարդ անընթեռնելի մնացած են, որով եւրոպական լեզուն կը մնայ միշտ գաղտնիք մը:

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՅՑ

Եւրոպացուց ըով ճարտարութեամբ, ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ վաճառակա- նութիւնը, նաւարկութիւնն ու երկրագործութիւնը շատ ծաղկած էին: Վերջինն շատ մեծ յարգ ունէր, որուն կը զբաղէր շուրմերու մասնաւոր ժողով մը, և արօրով կը գծէր նոր քաղաքի մը շրջապատը, վասն զի այդ արուեստն կը համարէին՝ իբր ֆապ մը քաղաքացիներու ընկերակցութեան: Ունէին ձուլարաններ՝ ուր կը հալեցնէին իւլպա կղզիէն հանուած երկաթը, իրենց արուեստանոցներուն մէջ՝ մանրակրկիտ աշխատութեամբ կը բանէին ոսկին, արծաթը, պղինձն և արոյրը:

Իբր նաւատիներ՝ նշանաւոր էին արդէն հոմերական դիւցազնեղբորութեանց ժամանակէն՝ իբր «տիւռնեան ծովահէններ»: Եւրոպիա՝ բաց ի ցամաքային տիրապետութենէն՝ հիմնեց նաև ծովային կայսրութիւն մը: Իր նաւատիններն արշաւեցին դէպ ի ֆորսիքա և Սարտենիա կղզիները, հոն հաստատելով գաղթականութիւններ: Անշափ գօրութիւն ստացան նաւարկութեան և վաճառականութեան մէջ, որ բացարձակ տէր զարձան Միջերկրականի ալն գծին՝ որ իրենց անունով կոչուեցաւ «Տիւռնեան ծով»:

Վաճառականութեան մենաշնորհն ունէին Եւրոպացիները հիւսիսային Միջերկրականի մէջ, և փոխանցումներ կը կատարէին Կաղիքացուց, Կարքիզոնացուց և Մէծ Յունաստանի հետ, և ասոր միջոցաւ Բուն Յունաստանի հետ: Իրենց նաւերը Միկիլիայէն և Ռերիական ծովէն անցնելու վտանգէն խուսափելու համար, յաճախ

Լուկանիոյ մէջ ցամաք կը հանէին իրենց վաճառքը, — օր. համար բաժակներ, լապտերներ, հայելիներ —, և ցամաքի ճամբով կը փոխադրէին Սիրարիա, ու անկէջ ալ Բուն Յունաստան: Այս փոխադրութիւնները Սիրարիաի գործունէութեան և հարստութեան պատճառն եղան:

Եւրոպացիներն ամենաւարակ արուեստագէտներ էին: Իրենց վաճառքներու փոխարէն՝ յունական արուեստի առարկաներ բերելով, և զանոնք իբր կաղապար



Եւրոպացի երկու ծերունիք ըստ գերեզմանի մը Յկարին ի գիրէ. — Այդ նկարը կը յիշեցնէ միանգամայն յունական անօթներու նկարներն և Եղիպտական յուշարձանները: Երբեմնեւրուս գաղթները քերծուած են, նազուած են ծալ ծալ փաթկուած տեսակ մը պարեգօտ որ ազատ կը թողու ուն ու բազուկը: Բարձր օջիկներ հազուած են և նստած են փղոսկրեայ զանգուր վրայ՝ նման յունական աթոռներուն:

գործածեալով՝ ձուլեցին թրծուն հողէ հրաշալի աշտանակներ, արձաններ, զէնքեր, անօթներ, որոնք այսօր Թանգարաններու զարդեր են: Այսչափ և պէս պէս առարկաներէն կարելի է դատել Եւրոպացուց կեանքի փարթամ սովորութիւններն, և միանգամայն թէ ի՞նչ աստիճանի կատարելութեան հասած էին արձանագործութիւնն ու նկարչութիւնն իրենց մէջ:

Շինելու արուեստին մէջ ցալ, Եւրոպա

բացինհրը հսկայ աշխատութիւններով կա-
նոնաւորեցին Բոյի զելզային շուրերն և
ստորերկրեայ խողովակներով շորցուցին
Առնոյի և ուրիշ գետերու ճահճները :
Բարձրացուցին մեծղի քաղաքներ՝ ամրացը-
նելով մեծ դռներով ու կամարներով և
կամարած և կոյուղիներով : Իրենց կ'ըն-
ծայուի դոսկանեան կոչուած ճարտարա-
պետութեան ճիւղը : Առաջին անգամ իրենց
շինեցին կամարներ և զմրեթներ : Ետրու-
րական տունները բաղկացած էին հախոցու-

րածներ և խնճոյքներ ներկայացնող նկար-
ներով :

Թուլացած չափազանց
գեղիտութենէ ու ան-
կարգ բարքերէ, և զուրկ
փինիկեցեաց նման քա-
ղաքական հզօր վարչութենէ մը, Ետրու-
րացիներն անկարող եղան իրենց սպառ-
նացող վտանգը հեռացնելու : Կամաց կա-
մաց ինկան և պատմական ասպարէզէն



Ետրուրական տիպարներ. — Ջարադամբամ Թրծում Ռողէ, ի Նուր,
Ալքերը նշած մեծաբաց են և վերամբարձ դէպի ցունցերը՝ նման Չինա-
ցիներուն : Երկու անձինքները, էրիկն ու կինը արմկայեց են անկողնի մը
վրայ, նման անոնց որոնց վրայ կ'ընկողմանէին ուտելու համար : Կայ ան-
կողնի մը և իւրացանլիւր անձի ձախ բազկին տակ բարձր :

սիբէ (*atrium*) մը, որ ապա հռոմէական
տուններուն նախատիպն եղաւ : Բայց իրենց
ճարտարապետական հրաշակներտ գործերէն
մնացած են միայն՝ դամբասական սենեակ-
ները, որոնք դարձեալ յատուկ կնիք մ'ու-
նին : Այս սենեակներուն անջրպետներուն
մէջ՝ նկարներով գործուած խցիկներ յար-
մարցուած էին, իբր յուզարկաւորական
սրահներ՝ ուր դիակը կը հանգչըր ան-
կողնի մը վրայ, որու շուրջը կը շարէին
ամէն տեսակ կարասիներ, կերպասեղէն-
ներ, ակունքներ (մանեակներ, մատանիներ,
խոշոր գնդասեղներ, ապարանջներ) և նը-
կարէն մեծ անօթներ : Որմեքը յաճախ
ծածկուած էին՝ խաղեր, գերիներու կոտո-

անփառունակ անհետացան : Գրեթէ միշտ
կուռի մէջ՝ Միծն Յունաստանի և Սիկիլիոյ
հետ, ծանր հարուած մը ստացան կուռա
քաղաքէն (474), և այդ օրէն ի վեր ի-
րենց ծովային տիրապետութիւնը սկսաւ
լինալ : Մի և Նոյն ժամանակ իրենց ցա-
մաքային կայսրութիւնն ալ ամէն կողմա-
նէ յարձակումներ կրելով՝ տկարացաւ ու
անկման մօտեցաւ : Նախ Գաղղիացիներն
արշաւեցին և Բոյի շուրջը գտնուած Ե-
տրուրիան գրաւեցին : Յետոյ Հռոմայեցի-
ները յարձակեցան կեդրոնական Ետրու-
րիայի վրայ, և երկար կռիւներէ վերջ՝
ենթարկեցին գիրենք իրենց լուծին տակ :
Այսպէս ետրուրական ազգը բոլորովին

հռոմէական զաղութներու հետ ձուլուեցաւ (264)։

Սակայն ետրուրական կրօնը, քաղաքական կարգերը, մշակութիւնը, ճարտարաւոճութիւնը, գեղարուեստը, վաճառականութիւնը, մեծաշուք յաղթանակի հանդէսներ, կրկէսը, սուսերամարտիկներու խաղերը, առանձնական ու հասարակական կեանքի սովորութիւններն անցան Հռոմ, ուր խառնուեցան Մեծն Յունաստանէն եկած զաղափարներուն, սովորութեանց ու այրուքներին հետ ։ Այս ձուլումը յառաջ բերաւ հռոմէական քաղաքակրթութիւնը։

Թերակղզիին կեդրո-

ԻՏԱԼԱՑԻՆԵՐԸ նական մասին մէջ հաստատուած էին իտալացիները՝, Այս ժողովուրդները, — որոնք Հելլէններու հետ կը ձևացնէին հնդիկ-հելոսպական մեծ ընտանիքին յունա-իտալական ցեղական խումբը, — մեծ բաժին ունին արդի իտալական ազգին կազմութեան մէջ, իտալացւոց ազգակցութիւնը Հելլէններու հետ՝ ապացուցուած է անհերքելի փաստերով՝ յոյն եւ լատին լեզուներու համեմատութեամբ։

Հին իտալացիները կը բաժնուէին չորս տարբեր խումբերու. Ոսկացիներ, Լատիններ, Ումբրիացիներ եւ Սարելեանք։

Տիրերիսէն մինչև Թերակղզ-

ՈՍԿԱՑԻՔ զիին վերջ ն մայրը, ընդ մէջ միջին եւ ստորին իտալիոյ, տարածուած էին Ոսկացիք. Գրեթէ ամենուրեք նուաճուեցան եւ խառնուեցան սարելեական ժողովուրդներու մէջ. իրենց անկախութիւնը պահպանին միայն ստորին Լատինի եւ կամպանիոյ մէջ՝ մինչև հռոմէական տիրապետութիւնը. իրենց լեզուն նոյն հիմը կը կազմէր՝ ինչ որ է իտալա-

կան կոչուած ազգերունը, եւ նոյն իսկ Հռոմի ծաղկած դարուն՝ ամբոյն ու երիտասարդութիւնը կը զուարճանային Ոսկացւոց լեզուով երգուած Ատելլանեան վէպերով եւ կարաք կոչուած պարերով ։

Կեդրոնական Ապենինեան ԼԱՑԻՔ ներէն իջնիով՝ Լատինք գրաւեցին հին Լատինը, վոնտելով անկէ նախկին բնակիչները՝ Սիկուլը. իրկրագործութեան նուիրուած ժողովուրդ մ'էր, ծանրաբարոյ, կանոնաւոր իր գործունէութեան մէջ եւ օժտուած հռոմէական նկարագրի յատուկ գործնական մտքով։

Ապենինեանց երկու զառիթափերուն վրայ կը բնակէին Ումբրիացիք։ Իրենց տէրութիւնը կը տարածուէր արևմուտքէն մինչև Տիրեթիսի միջին հոսանքը, եւ արեւելքէն մինչև Գարզանտի (Բունդա Սարաչնա) հրուանդանը։ Հիմնեցին բազմաթիւ քաղաքներ, եւ երկար ժամանակ քաջաբար պաշտպանեցին իրենց ընդարձակ պետութիւնը, բայց ի վերջոյ՝ յաղթուած նախ Ետրուրացիներէն, յետոյ Սարելեան ցեղերէն՝ ամփոփուեցան այն անձուկ սահմանին մէջ՝ որ իրենց անունով կոչուեցաւ Ումբրիա։

Սարելեան անունով կը

ՍԱՐԵԼԵԱՆՔ հասկցուին Սարիւնացիք, եւ ասոնցմէ սերած զաւազան ցեղերը։ Սարիւնացիք՝ քաջամարտիկ, արդար եւ սակաւապետ ազգ մ'էին, տարածուած կեդրոնական-հարաւային իտալիոյ մէջ՝ շնորհիւ իրենց եռիրակուն ըստած գարուններուն։ Այս կերպով Սարիւնացիներէ յառաջ եկան Սանիտացիք, Պիկենցիցիք, Փրենտանացիք, Վեստինացիք,

1. Արդի քննադատներն այս անունը (Italiotes) տուած են կեդրոնական առմին, որովհետեւ այդ հնդիկ-հելոսպական խումբին վրայ կ'ընծած է իտալական Թե-

բակղզիին պատմութեան կարեւորութիւնը։

2. Ատելլա քաղաքին անունով կոչուած են այս վէպերն ու պարերը։

Մարտիկներ, Մարտիկ (քաջ պատե-
րազմողներ), Պիկցեներ, Լսկանցի, Ե-
կուացի, Հանրիկացի և Վոլսկացի։ Այս
զաղթականութեանց ծագումը տեղի տուած
է զրոյցի մը, որով Սարելեանք կը բա-
ցատրէին իրենց ծաւալման պատճառը։

Սարելեանք, համաճարակի միջոց կամ սովի ազեա-
նելու տանն, համարելով թէ աստուածները զայրացած
են, կը ջանային մեծ զոհով մ'անոնց ցատումը իշխցնել,
Առաջոց աստուծոյ մը կը նուիրէին, ինչ որ ծնանէր

տարւոյն ջրէնին մէջ, և այս կ'ըսուէր Թագրական գա-
րոն (ver sacrum), Այդ տարուան մէջ ծնած բոլոր
ազաները կը պատկանէին աստուծոյ, Կոր չափահաս
բւլլային, բուրն ի միասին կը մկնէին և կ'երթային
կը հաստատուէին իրենց ուզած տեղերը։ Այսպէս, այլ
և այլ ջրէններու մէջ, Սարելեացոց երկրէն մկնած
էին քաղմարի, խումբեր, Խաբքանչիւրը նուիրական
կենանի մ'եռնէն զացած էր, ինչպէս զայլի մը, փայ-
տափորի մը, զոր աստուածատու կը համարէին. հոն՝ ուր
կենդանին կանգ առնէր՝ խումբը կը հաստատուէր իր բնա-
կութիւնն և ժողովուրդ մը կը կազմէր։

Շար-

Հ. Ս. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ



ՆՈՐԱ



Ջահանյայապետական Պատարագէ մը վերջ՝ ժողովուրդը
Ս. Պետրոսէմ դուրս կ'ելլէ

Վատիկանի Փանոնյայապետական ընտելալայրը (աշտկողման շէնքը), Ս. Պետրոսի
եկեղեցին և երապարակը